Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

6122




ՀԱՄԱՌՕՏ

# ԺԱՄԱԳԻՐՔ

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ

## Ս. ՊԱՏԱՐԱԳԻ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՑ ԵՒ ԻՐԻԿՆԱՄՈՒՏԻ
ՀԱՆԳՍՏԵԱՆ ԵՒ ԽԱՉԱՀԱՆԳՍՏԻ

Ա. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՏԻԹՐՈՅԹԻ ՀԱՅ ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻԻ
ՀՈԳԵԲԱՐՁՈՒԹԵԱՆ

25 ՍԵՆԹ

1925

264
Հ- 20

Ն–20 11 OCT 2009



# ԽՈՐՀՈՒՐԴ

## ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ

### ԴՁ.

ԽՈՐՀՈՒՐԴ Խորին անհաս անսկիզ-
բն. որ զարդարեցեր զվերին պետու-
թիւնդ. ի յառագաստ անմատոյց լու-
սոյն գերապանծ փառօք զդասս հրե-
ղինաց ։
Անճառահրաշ զօրութեանց ստեղծեր
զԱդամ պատկեր տիրական, և նազելի
փառօք ըզգեստաւորեցեր ի դրախտն
Եդենի տեղի բերկրանաց ։
Չարչարանօք քո սուրբ Միածնիդ՝ նո-
րոգեցան արարածք ամենայն և վերս-
տին մարդն անմահացաւ, զարդարեալ
է զգեստ անկողոպտելի ։
Թագաւոր երկնաւոր զեկեղեցի քո ան-
շարժ պահեա՛, և զերկրպագուս ան-
ուանդ քում պահեա՛ ի խաղաղութեան

31 MAY 2013
6122



Քահ. վասն Սրբուհւոյ...
Սար. Սուրբ զԱստուածածին՝ եւ զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս. զի կամեցեալ ողորմեսցի՝ եւ գթացեալ կեցուսցէ զարարածս իւր: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո՛ եւ ողորմեա՛:
Քահ. Ընկա՛լ, Տէր...
Դպ. Յիշեսցիր եւ զմեզ առաջի անմահ Գառին Աստուծոյ:
Քահ. Յիշեալ լիջիք...

Դպ. Փոխ. Աղաղակեցէ՛ք առ Տէր ամենայն երկիր, ծառայեցէք Տեառն ուրախութեամբ:

Մտէ՛ք առաջի նորա ցնծութեամբ ծա
նեարուք զի նա Տէր Աստուած մեր:
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ:
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից
Ամէն:

Սար. Սուրբ Եկեղեցւոյ աղաչեսցուք զՏէր, զի նովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողոր-

ԱԶԳԱՅԻՆ ... ՀԱՄԱՐ
(Ջ-98)



մութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր՝ կեցո՛ և ողորմեա:
Քահ. Ի մէջ տաճարիս...
Քահ. Մտից առաջի սեղանոյ...
Սար. Դատ արա՛ ինձ, Աստուած, և իրաւ արա՝ ինձ ի դատաստանի իմում:
Քահ. Յազգէ՝ որ ո՛չ...
Սար. Դու Աստուած հզօրիչն իմ ես ընդէ՞ր մոռացար զիս, ընդէ՞ր տըր-տում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ:

Քահ. Առաքեա՛, Տէր,
Սար. Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած՝ որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Քահ. Խոստովան եղէց
Սար. Արդ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս յուսա՛ առ Աստուած, խոստովանեսցու՛ նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուած է:
Փառք Հօր և: Այժմ և միշտ:
Սար. Օրհնեսցո՛ւք զամենակալն

456-2000

Աստուած՝ զՀայր Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի որ արժանի արար
զմեզ կալ ի տեղւոյս փառաւորու-
թեան, եւ երգել զերգս հոգեւորս,
Ամենակալ Տէր Աստուած մեր՝ կեցո
եւ ողորմեա:

Քահ. ի յարկի սրբութեան

(Նստելու ժամանակ)

## ՇԱՐԱԿԱՆ ԽՆԿԱՐԿՈՒԹԵԱՆ

Յարեաւ Քրիստոս այսօր աւետիս որդիք սիոնի, ընդ իւր յարոյց մեզ զնախահայրն փոնկելան ի դրախտէն նաեւ այլոց զհոգին սուրբ, հարանց զգերեալսն ի բանտէն: Է առ աւար եւ գերեաց զհզօրն՝ ի պատերազմի: Ցըն-ծասցուք, ցնծասցուք ով ազատեալք արեամբ գառին, քանզի ե բաց մեզ ճանապարհք խերով խաչիւն, եւ շնորհեաց զայն զոր կորոյս հայր մեր նախկին եւ զւարթունք երկնից ընդ մեզ երգակցեալ գոչեն, Օրհնեալ է սուրբ



Յարութիւն: Գովեալ է սուրբ Յարութիւնդ:

Ի Գերեզման Յարուցելոյն անմահին այսօր գոչէր հրեշտակն երկնային: Յարեաւ Քրիստոս զարդեաւ Քրիստոս ի լոյս գերեզմանէն ի կայր գերեզմանէն:

Պահապանքն զարհուրեցան ի ձայնէն, եւ տրտմութեամբ լային ի յահէ Յարեաւ Քրիստոս:

## ՇԱՐԱԿԱՆՔ ԹԱՓՈՐԻ

զձ. Փառաբանակից Հօր Որդի. որ վասն մեր խաչեցար. զդըժոխս աւերեալ յարեար յաւուր երրորդի, փառք յարութեան քո Տէ՛ր: Հրեշտակապետին իջումն որ ըզպահապանսն երկիւղիւ զարհուրեցոյց առ դրանըն գեցեզմոնին. փա՛ռք յարութեան: Եւ սքանչելի սուրբ կանանցն աւետարանէր ասելով. յարեար Քրիստոս յարուրիչըն մեռելոց. փա՛ռք:

Կան անցըն կանխելով ի թաղումըն կենդանւոյն. տեսին ըզվէմն ի դըրան-

ցըն ի բաց մերժեալ: Թափուր ըզգերեզմանն եւ ունայն տեսանէին եւ արտմութեամբ լային յուսահատեալք: Մայր խաչեցելոյն զի լաս յուսահատեալ, քանզի Քրիստոս փառօք մեծաւ արեաւ:

«Յօտնկայս»

Բարեխօսութեամբ Մօր քո եւ կուսի, ընկալ զաղաչանս քոց պաշտօնէիցս:

Որ գերագոյն քան զերկինս պայծառացուցեր սուրբ զԵկեղեցի արեամբ քո Քրիստոս. եւ ըստ երկնայնոցն կարգեցեր ի սմա զդասս Առաքելոց եւ Մարգարէից սուրբ Վարդապետաց:

Այսօր ժողովեալ դասք քահանայից, սարկաւագաց, դպրաց եւ կղերիկոսաց. խունկ մատուցանեմք առաջի քո Տէր, յօրինակ ըստ հնումն Զաքարիա: Ընկալ առ ի մէջ զխնկանուէր մաղթանս, որպէս զպատարագն Աբելի, Նոյի եւ զԱբրահամու:



Բարեխօսութեամբ վերին քո զօրացդ միշտ անշարժ պահեա՛ զաթոռ Հայկազնեայս:

Սար. Օրհնեա՛ Տէր:

Քահ. Օրհնեալ թագաւորութիւնն

«Դպիրք կարդան ժամամուտն ըստ պատշաճի աւուրն»

## ԺԱՄԱՄՈՒՏ ԿԻՒՐԱԿԷ ԱՒՈՒՐ

Միածին Որդի և Բանդ Աստուած և անմահ էութիւն, ո յանձն առեր մարմնանալ ի Սրբուհւոյ Աստուածածնէն և ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ, խաչեցար Քրիստոս Աստուած մեզ, մահուամբ զմահ կոխեցեր. մինդ ի Սրբոյ Երրորդութենէն, փառաւորակից ընդ Հօր եւ Սրբոյ Հոգւոյն. կեցո զմեզ:

Սար. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկալ կեցո եւ ողորմեա՛. Օրհնեա Տէր:

Քահ. Օրհնութիւն եւ փառք..

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:
Սար. Աստծ՝ երկիրպագեսցուք:
— Դպ. Առաջի քո Տէր
Քահ՝ Տէր Աստզ.

[Նստելու է]

## ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆՔ

— Գովեայ Երուսաղէմ զտէր ի մեռելոց աղէլուիա, Եկայք ժողովուրդք երգեցէք անատն աղէլուիա, Փառք հօր եւ որդւոյ Այժմ եւ միշտ. Յարուցելոյն ի մեռելոց աղէլուիա, որ զաշխարհս լուսաւորեաց աղէլուիա:

ակ. Թագաւորեաց Աստուած ի վերայ հեթանոսաց, եւ լուսազարդեալ պայծառացոյց սուրբ զեկեղեցի: Ժողովուրդք զՔրիստոս բարեբանեցէք: Զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւրածաւ, քանզի չիշոջ խայթոց մահ. Ժողո: Յ ա ր ե ա ւ Աստուած եւ տիեզերք ամենայն նորափետուր զարդարեցան, եւ մանկունք հաղորդեցան մարմնոյ եւ արեան կենսաբարին, Ժողո.



Սար. Օրհնեա՛ Տէր:
Քահ. Զի քո է կարողութիւն՝
Սար. Պռօսխումէ:
— Դպ. Սուրբ Աստուած, Սուրբ եւ հզօր
Սուրբ եւ անմահ, որ յարեար ի մեռելոց ողորմեա մեզ (երեք անգամ)
Սար. Եւ եւս խաղաղութեան զՏէր
աղաչեսցուք:
— Դպ. Տէր ողորմեա՛: 3 անգամ
Յիշեա տէր եւ ողորմեա եւայլն
Սար. Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի՝ եւ հաստատութեան սրբոյ Եկեղեցւոյ զՏէր աղաչեսցուք:
Վասն ամենայն սուրբ եւ ուղղափառ եպիսկոպոսաց զՏէր աղաչեսցուք:
Վասն Հայրապետին մերոյ Տեառն [ այս անուն) կենաց՝ եւ փրկութեան հոգւոյ նորին, զտէր աղաչեսցուք
Սար. Օրհնեա՛ տէր:
Քահ. Զի ողորմած եւ

« Նստելու ժամանակ »

Նպա աւուր պատշաճի ձայնու Գիրքը

եւ Աւետարան կը կարդացուի:

— Դպ Փառք քեզ տէր Աստուած մեր:

Յոտնկայս Աւետարանը

## ՀԱՆԳԱՆԱԿ ՆԻԿԻԱԿԱՆ

Հաւատամք ի մի Աստուած ի Հայր ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի երևելեաց և աներևութից:
Եւ ի մի տէր Յիսուս Քրիստոս յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստծ. Հօրէ միածին այսինքն յէութենէ Հօր:
Աստծ. Աստուծոյ՝ լոյս ի լուսոյ, Ած. ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ ծընունդ և ոչ արարած:
Նոյն ինքն ի բնութենէ Հօր՝ որով ամենայնինչ եղև յերկինս եւ ի վերայ երկրի երեւելիք, և աներևոյթք:
Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան՝ իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կոյ



ւէն՝ Հոգւովն Սրբով:
Որով էառ մարմին, հոգի եւ միտք եւ զամենայն որ ինչ է ի մարդ, ճըշմարտապէս և ոչ կարծիօք:
Չարչարեալ խաչեալ, թաղեալ յերրորդ աւուր յարուցեալ ելեալ ի երկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ Հօր:
Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր, ի դատել զկենդանիս և զմեռեալս: Որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան:
Հաւատամք և ի Սուրբ Հոգին՝ յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յՕրէնս եւ ի Մարգարէս եւ յԱւետարանս:

Որ էջն ի Յորդանան քարոզեաց զառաքեալն և բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք և ի մի միայն Ընդհանրական և Առաքելական սուրբ Եկեղեցի:

Ի մի մկրտութիւն, յԱպաշխարու

թիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց:

Ի Յարութիւն մեռելոց, ի Դատաստանն յաւիտենից հոգւոյն և մարմնոյ Արքայութիւն երկնից՝ և ի կեանս յաւիտենականս:

Իսկ որք ասենն՝ էր երբեմն յորժամ ո՛չ էր Որդին, կամ էր երբեմն յորժամ ո՛չ էր Սուրբ Հոգին, կամ թէ ոչէից եղեն կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ եւ կամ զՍուրբ Հոգին. եւ թէ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ Կաթողիկէ եւ Առաքելական Ս. Եկեղեցի:

Սար. Օրհնեա՛ Տէր:

Քահ. Իսկ մեք փառաւորեսցուք...

Սար. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դպ. Ամէն Տէր ողորմեա:

Սար. Եւ եւս հաւատով աղաչեսցուք եւ խնդրեսցուք ի Տեառնէ Աստուծոյ



եւ ի Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ի ժամուս պաշտաման եւ աղօթից, զի արժանի ընդունելութեան արասցէ:

Դպ. Կեցո՛ Տէր:

Դպ. Շնորհեա՛ Տէր: Շնորհեա՛ Տէր, Շնորհեա՛ Տէր. Շնորհեա՛ Տէր:

Դպ. Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Դպ. Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛ Տէր ողորմեա:

Սար. Օրհնեա՛ Տէր:

Քահ. Որպէս զի արժանաւորք...

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սար. Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպ. Առաջի քո Տէր:

Քահ. Խաղաղութեամբ քով...

Սար. Օրհնեա՛ Տէր:

Քահ. Տէր Աստուած օրհնեցէ՛...

Դպ. Ամէն:

(Նստելու ժամանակ)

Սար. Մի՛ ոք յերեխայից, մի՛ ոք ի թերահաւատից, եւ մի՛ ոք յապաշխա-

բողոց եւ յանմաքրից մերձեցի յԱստուածային խորհուրդս։

— Դպ. Մարմին տէրունական և Արիւն փրկչական կայ առաջի. երկնային զօրութիւնքն աներեւոյթք երգեն եւ ասեն անհանգիստ բարբառով. Սո՛ւրբ Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Տէր զօրութեանց։

Սար. Սաղմոս ասացէ՛ք Տեառն Աստուծոյ մերում դ՚պիրք ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգեւորս։

Սարկաւագունք կը կատարեն վերաբերումը եւ դպիրք կ՚երգեն Սրբասացութիւնն ըստ պատշաճի աւուր։

## ԿԻՐԱԿԷԻ, ԵԿԵՂԵՑԻՈՅ, ՀՐԵՇՏԱԿԱՑ

Հրեշտակային կարգաւորութեամբ լցեր Աստուած ·զքո սուրբ զեկեղեցի։ Հազարք հազարաց հրեշտակապետաց կան առաջի քո- Եւ բիւրք բիւրոց հրեշտակք պաշտեն զքեզ Տէր, եւ ի մարդկանէ հաճեցար ընդունիլ զօրհ-



նութիւն։ Ձայնիւ խորհրդականաւ, սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեան.

Սար. Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Դպ. Տէր ողորմեա։

— Սար. Եւ ևս հաւատով եւ սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ ահիւ։ Մի՛ խճղիւ եւ դայթակղութեամբ. մի՛ նենգութեամբ, խորամանկութեամբ, մի՛ պատրանօք եւ խաբէութեամբ։

Դպ. Կեցո՛ Տէր եւ ողորմեա՛։

Սար. Օրհնեա՛ Տէր։

(յանկայս)

Քահ. Շնորհօք եւ մարդաս...

— Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սար. Աստուծոյ երկրպագեսցուք։

— Դպ. Առաջի քո Տէր։

Սար. Ոգջո՛յն տո՛ւք միմեանց ի համբոյր սրբութեան եւ որք ոչ էք կարողք հաղորդիլ Աստուածային խորհրդոյս՝ առ դրունս ելէ՛ք եւ աղօթե-

ցէ՛ք։

Դպ. Քրիստոսի մէջ մեր յայտնեցաւ
Որ էնն Աստուած աստ բազմեցաւ։
Խաղաղութեան ձայն հրնչեցաւ Սուրբ
ողջունի հրաման տուաւ։ Եկեղեցիս
մի անձն եղեւ. Համբոյրս յօդ լրման
տուաւ։ Թշնամութիւնն հեռացաւ.
Սէր յընդհանուրս սփռեցաւ։ Այժ պաշ
տօնեայք բարձեալ զձայն, տուք օրհ
նութիւն ի մի, բերան։ Միաստական
Աստուածութեան որուն Սրովբէքն են
սրբաբան։

Սար. Աչիւ կացցուք երկիւղիւ կաց-
ցո՛ւք, բարւոք կացցուք, եւ նայե-
ցարուք զգուշութեամբ։

Դպ. Առ քեզ Աստուա՛ծ։

Սար. Պատարագ Քրիստոս մատչի
անարատ գառն Աստուծոյ։

Դպ. Ողորմութիւն եւ Խաղաղու-
թիւն եւ պատարագ օրհնութիւն։

Սար. Օրհնեա՛ Տէր։

Բաշ. Շնո՛րհք, Սէր.



Դպ. Ամէն եւ ընդ հոգւոյդ քում։

Սար. Զդրունս, զդրունս, ամենայն
իմաստութեամբ եւ զգուշութեամբ։
Ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր
Աստուածային երկիւղիւ։

Դպ. Ունի՛մք առ քեզ՝ Տէր ամենա-
կալ։

Սար. Եւ գոհացարուք զՏէառնէ
յամենայն սրտէ։

Դպ. Արժան եւ իրաւ։

Սար. Օրհնեա՛ Տէր։

Բաշ. Եւ ընդ Սերովբէսն

Դպ. Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Տէր
զօրութեանց. լի են երկինք եւ երկիր
փառօք քո։ Օրհնութիւն ի բարձունս
օրհնեալ որ եկիր եւ գալոց ես ան
ուամբ Տեառն։ Ովսաննա ի բարձունս.

Սար. Օրհնեա Տէր։

Բաշ. Առէք, կերէ՛ք.

Դպ. Ամէն։

Սար. Օրհնեա Տէր։

Բաշ. Արբէք ի սմանէ.

456-2008-98

ՀԱՍԱՐ

— Դպ. Ամէն. Հայր երկնաւոր, որ զՈրդիդ քո ետուր ի մահ փոխան մեր պարտական պարտեաց մերոց. հեղմամբ արեան սորա աղաչեմք զքեզ, ողորմեա՛ քո բանաւոր հօտի:

Սար. Օրհնեա՛ Տէր:

Քահ. Եւ զքոյս ի քոյոց՝ . .

— Դպ. Յամենայնի օրհնեալ ես, Տէր, օրհնեմք զքեզ. գովեմք զքեզ. գոհանամք զքէն. աղաչեմք զքեզ, Տէր Աստուած մեր:

Սար. Օրհնեա՛ Տէր:

Քահ. Խաղաղութիւն ամենեցուն:

— Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սար. Աստուծոյ երկրպագեսցուք:

— Դպ. Առաջի քո Տէր: Որդի՛ Աստուծոյ, որ պատարագեալ Հօր ի հաշտութիւն, Հաց կենաց բաշխիս ի մեզ. հեղմամբ արեան քո սուրբ, աղաչեմք զքեզ. ողորմեա՛ արեամբ քով փրկեալ հօտի:

Սար. Օրհնեա՛ Տէր:



Քահ. Որպէս զի եղեցի . . .

— Դպ. Հոգի՛ Աստուծոյ, որ զփառակցի քո զխորհուրդ իջեալ ի յերկնից կատարես ի ձեռս մեր. հեղմամբ արեան սորա աղաչեմք զքեզ, հանգո՛ զհոգիս մեր ննջեցելոցն:

Սար. Օրհնեա՛ Տէր:

Քահ. Ընդ որս և մեզ . . .

— Դպ. Ցիշեա՛ Տէր և ողորմեա՛:

Քահ. Աստուածածնին սրբոյ.

— Դպ. Ցիշեա՛ Տէր և ողորմեա՛:

Սար. Առաքելոց սրբոց մարգարէից վարդապետաց, մարտիրոսաց, և ամենայն հայրապետաց սրբոց: Առաքելագործ եպիսկոպոսաց, երիցանց, ուղղափառ սարկաւագաց, և ամենայն սրբոց, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագիս աղաչեմ:

— Դպ. Ցիշեա՛ Տէր և ողորմեա՛:

Սար. Օրհնեալ, գովեալ և փառաւորեալ հրաշալի և աստուածազարդ Յարութեանն Քրիստոսի երկրպագանեմք:

Դպ. Փա՛ռք Յարութեան «կամ Տէրութեան» քո Տէր:

«Նստելու ժամանակ»

Սար. Առաջնորդացն մերոց և առաջին Լուսաւորչացն՝ սրբոց Թադէոսի և Բարդուղիմէոսի Առաքելոցն և Գրիգորի Լուսաւորչին.

Դպ. Ցի՛շեա Տէր և ողորմեա՛:

Սար. Միանձնացելոց սրբոց առաքինասէր և աստուածուսոյց կրօնաւորացն, Պօղոսի, Անտոնի, Պօղայ, Մակարայ...

Դպ. Ցի՛շեա Տէր և ողորմեա՛:

Սար. Թագաւորաց հաւատացելոց սրբոց՝ Աբգարու, Կոստանդիանոսի, Տրդատայ և Թէոդոսի...

Դպ. Ցի՛շեա Տէր և ողորմեա՛:

Սար. Ընդհանո՛ւր ամենայն հաւատացելոց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, և ամենայն չափու հասակի հաւատով և սրբութեամբ ի Քրիստոս ննջեցելոց, եղիցի յիշատակ ի



սուրբ Պատարագս աղաչեմք:

—Դպ. Ցի՛շեա Տէր և ողորմեա՛:

Սար. Օրհնեա՛ Տէր:

Քահ. Եւս առաւել...

Սար. Գոհութի՛ւն եւ փառաբանութիւն մատուցանեմք քեզ, Տէ՛ր Աստուած մեր, վասն սուրբ և անմահ պատարագիս որ ի վերայ սրբոյ սեղանոյս: Զի զսա՛ մեզ ի սրբութիւն կենդանութեան պարգևեցեր: Սովաւ շնորհեա՛ զսէր, զհաստատութիւն եւ զըղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի. սրբոյ Եկեղեցւոյ եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց: Եպիսկոպոսապետին մերոյ և պատուական Հայրապետին ամենայն Հայոց տեառն (----) Կաթողիկոսին: Եւ հատահիմն պահպանեա ընդ հովանեաւ զՀանրապետութիւն Ազգիս Հայոց եւ զԱռաջնորդն վիճակիս ...: Եւ Քահանայիս որ զպատարագս մատուցանէ: Եւ վասն զօրութեանց եւ յաղթու-

Թեանց թագաւորաց քրիստոնէից եւ իշխանացն բարեպաշտից: Աղաչեսցուք եւ խնդրեսցուք եւ վասն հոգւոցն հանգուցելոց: Եւս առաւել վասն հանգուցեալ բարունապետացն մերոց, եւ շինողաց սրբոյ Եկեղեցւոյս եւ որք ընդ հովանեաւ սորին են հանգուցեալ: Ազատութի՛ւն եղբարց մերոց գերելոց, եւ շնորհ առաջիկայ ժողովրդեանս: Հանգիստ հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս կատարելոցն, եղիցի՛ յիշատակ ի սուրբ Պատարագս աղաչեմք:

Դպ. Ըստ ամենայնի և յաղագս ամենեցուն:

Սար. Օրհնեա՛ Տէր:

Դպ. Ամէն և ընդ հոգւոյդ քում:

Սար. Ամէն Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա՛:

Սար. Ամենայն սրբովք, զորս յիշատակեցաք. եւս առաւելապէս զՏէր աղաչեսցուք:



Դպ. Տէր ողորմեա՛:

Սար. Վասն մատուցեալ սուրբ եւ Աստուածային անմահ Պատարագիս, որ ի վերայ սրբոյ Սեղանոյս. զՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա՛:

Սար. Որպէս զի Տէր Աստուած մեր որ ընկալաւ զսա ի սուրբ յերկնային և յիմանալի իւր մատուցարանն, զփոխանակն առաքեսցէ առ մեզ զշնորհս եւ զպարգեւս Հոգւոյն Սրբոյ զՏէր աղաչեսցուք:

(յանկայս)

Դպ. Տէր ողորմեա՛:

Սար. Ընկալ կեցո եւ ողորմեա՛ եւ պահեա՛ զմեզ Տէր քո՛յին շնորհիւ:

Դպ. Կեցո՛ Տէր եւ ողորմեա:

Սար. Զամենասրբուհի զԱստուածածինն եւ զմիշտ կոյսն Մարիամ՝ հանդերձ ամենայն սրբովք յիշելով. զՏէր աղաչես:

Դպ. Յիշեա Տէր եւ ողորմեա:

Սար. Եւ ես միաբան փառն:

Դպ. Տէր ողորմեա՛:

Սար. Զանձինս մեր և զմիմեանս:

Դպ. Քեզ Տեառնդ յանձնեցի:

Սար. Ողորմեաց մեզ Տէր Աստուծ.

Դպ. Տէր ող. Տէր ող. Տէր ող.

Սար. Օրհնեա՛ Տէր:

Քահ. Եւ տուր մեզ.

Դպ. Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի: զՀաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր: Թող մեզ զպարտիս մեր որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի տանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա՛ ի չարէ:

Սար. Օրհնեա՛ Տէր:

Քահ. Զի քո է արքայութիւն.

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սար Աստուծոյ երկիրպագեսցուք:

Դպ. Առաջի քո Տէր:

Սար. Օրհնեա՛ Տէր:



Քահ. Քրիստոս, Յիսուս.

Սար. Պռոսխումէ՛:

Քահ. Ի սրբութիւն Սրբոց:

Դպ. Միայն սուրբ, միայն Տէր, Յիսուս Քրիստոս, ի փառս Աստուծոյ Հօր. Ամէն:

Սար. Օրհնեա Տէր:

Քահ. Օրհնեալ Հա՛յր:

Սար. Օրհնեա՛ Տէր:

Քահ. Օրհնեա Որդին Սուրբ:

Դպ. Ամէն:

Սար. Օրհնեա՛ Տէր:

Քահ. Օրհնեալ Հոգին Սուրբ:

Դպ. Ամէն:

Սար. Օրհնեա՛ Տէր:

Քահ. Օրհնութիւն և փա՛ռք:

«Նստելու ժամանակ»

Դպ. Ամէն. Հայր Սուրբ, Որդին սուրբ Հոգին Սուրբ: Օրհնութիւն Հօր և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Սար․ Օրհնեա՛ Տէր։
Ժող․ Ի Սո՛ւրբ, ի Սո՛ւրբ։

## ՄԱՂԹԱՆՔ ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱՅԻ

— Տէր ողորմեա, խ անգամ։

Յիսուս Քրիստոս է մեզ զթա՛
ցրուեալ զորդիս քո ժողովեա,
ուրախութիւն զմեզ պաշտեա,
եւ ի բարին առաջնորդեա։

Արի Աստուած հարցն մերոց,
որ ապաւէնդ ես նեղելոց
հաս օգնութիւն ծառայից քոց
Լէր օգնական ազգիս Հայոց։

Ամենասուրբ Երրորդութիւն
Տուր աշխարհիս խաղաղութիւն.
Եւ հիւանդաց առողջութիւն,
Ազգիս Հայոց ազատութիւն։

Աստուածածին քեզ ունինք յոյս.
Բարեխօսեա մեղաւորաց,
Եւ ողորմեա Տէր իմ Յիսուս
Հոգւոյ մերոյ կորուսելոյս։



Տէր ողորմեա, Տէր ողորմեա
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա,

Սար. Միջնորդութեամբ Ս. եւ անմահ եւ կենարար պատարագիս։

— Դպ. Ընկալ Տէր եւ ողորմեա։

Սար. Սաղմոս ասացէ՛ք Տեառն Աստուծոյ մերում, դպիրք ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգեւորս։ Զի սմա վայելեն սաղմոսք եւ օրհնութիւնք ալէլուք եւ երգք հոգեւորք։ Պաշտօնեայք, հանդերձ երգովք սաղմոս ասացէ՛ք, եւ զՏէր յերկինս օրհնեցէք։

(յաւանկայս)

— Դպ. Քրիստոս պատարագեալ, բաշխի ի միջի մերում. Ալէլուիա։

Զմարմին իւր տայ մեզ կերակուր, եւ Սուրբ զԱրիւն իւր ցօղէ ի մեզ. Ալէլուիա։

Մատի՛ք առ Տէր եւ առէ՛ք զլոյս. Ալէլուիա։

Ճաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք զի քաղցր է Տէր. Ալէլուիա։

Օրհնեցէ՛ք զՏէր ի յերկինս. Ալէ.
Օրհնեցէ՛ք զնա ի բարձունս. Ալէ:
Օրհնեցէ՛ք զնա ամենայն հրեշտակք նորա. Ալէլուեա:

Օրհնեցէ՛ք զնա ամենայն զօրութիւնք Նորա. Ալէլուեա:

Սար. Երկիրպագի՛ւ եւ հաւատով յառա՛ջ մատի՛ք, և սրբութեամբ հաղորդեցարո՛ւք:

Դպ. Աստուած մեր եւ Տէր մեր, երեւեցաւ մեզ. օրհնեա՛լ եկեալ անուամբ Տեառն:

Քահ. Կեցո՛ Տէ՛ր.

Դպ. Լցա՛ք ի բարութեանց քոց Տէր ճաշակելով զՄարմին քո եւ զԱրիւն. փա՛ռք ի բարձունս. կերակրողիդ ըզմեզ. առաքեա՛ ի մեզ զհոգեւոր քո զօրհնութիւն: Փա՛ռք ի բարձունս կերակրողիդ զմեզ:

Սար. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա՛:



Սար. Եւ եւս հաւատով ընկալեալք յԱստուածային, սուրբ, երկնային, անմահ, անարատ եւ անապական խորհրդոյս, զՏեառնէ գոհացուք:

Դպ. Գոհանամք զքէն, Տէ՛ր, որ կերակրեցեր զմեզ յանմահական Սեղանոյ քոյ: Բաշխելով զՄարմինդ և զԱրիւնդ ի փրկութիւն աշխարհի, և կեանք անձանց մերոց:

Սար. Օրհնեա՛ Տէր:

Քահ. Որ օրհնես զայնոսիկ...

Դպ. Օրհնեալ է Աստուած:

Քահ. Կեցո՛ զժողովուրդս քո,

Դպ. Ամէն:

Քահ. Սրբեա՛ զսոսա...

Դպ. Ամէն:

Քահ. Զխաղաղութիւն պարգեւեա՛

Դպ. Ամէն:

Քահ. Զի ամենայն տուրք...

Դպ. Եղիցի անուն Տեառն օրհնեալ այսմհետէ մինչեւ յաւիտեան: -երիս կրկնելով-:

Ժող. Կատարումն օրինաց ...

Սար. Օրհնի՛ր:

Ժող. Խաղաղութիւն Ամենեցուն...

— Դպ. Փա՛ռք քեզ Տէր Աստուած մեր:

Սար: Սուրբ Խաչիւ աղաչեսցուք զՏէր, ի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ, ամենակալ Տէր Աստուած մեր կեցո՛ և ողորմեա՛:

Ժող. Պաշտպանիչ և յոյս..,

— Դպ. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ:

Ժող. Օրհնեա՛լք եղերուք...





# Ա. ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ

## ԱՌԱՒՕՏԵԱՆ

### ԵՐԳ Ս. ՆԵՐՍԷՍԻ

Յիշեսցուք ի գիշերի զանուն քո Տէր.

Բղխեսցեն սիրտք մեր զբան բարի. և լեզուք մեր պատմեսցեն զգործս երկնաւոր Թագաւորիդ:

Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանեսցուք զքեզ Տէր:

Զաղօթս մեր առցուք քեզ Տէր, ի զաւիթս քո ի մէջ նոր Երուսաղէմի:

Ի գիշերի համբարձցուք զձեռս մեր սրբութեամբ առ քեզ Տէր:

Ի ձայն գոհութեան ամենայն հոգիք օրհնեցէք զՏէր:

Փ. Զարթի՛ք փառք մի, զարթի՛ք. ես զարթեայց առաւօտուց. ալէ-ւիա:

Զարթի՛ք ընդ զուարթունս, մանկունք վերին Սիոնի. ալէլուիա:

Զարթի՛ք որդիք լուսոյ, ի յօրհնութիւն Հօրն լուսոյ. ալէլուիա:

Զարթի՛ք երկրպագուք և արտասուօք զայն տացուք. ալէլուիա:

Փ. Զարթի՛ր, ընդէ՞ր ննջես, Տէր, մի՛ մերժեր զմեզ իսպառ:

Արի՛ Տէր օգնեա՛ մեզ. տացուք անուանդ քում զփառս:

Այժմ և յաւէտ. Հօր և Որդւոյ, և սուրբ Հոգւոյն. ամէն:

Յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Ամէն. ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեա: Բղխումն ի Հօրէ, բղխեա ի հոգւոյս, բան քեզ ի հաճոյս:

Գանձդ ողորմութեան, գանձից ծածկելոյ. զգտող զիս արա: Դուռն ողորմութեան, դաւանողիս բաց, դասեցո վերնոցն:



Երրեակ միութիւն, եզակիդ խնամող, և ինձ ողորմեա: Զարթիր ասէր, յօգնել, զարթո զթմրեալս, զուարթնոց նմանիլ:

Էդ Հայրն անսկիզբն, էակից Որդի է միշտ Սուրբ Հոգի: Ընկալ զիս գրթոց, ընկալ ողորմած, ընկալ մարդասէր:

Թագաւոր Փառաց, Թագաւորեանց տաւոր, թո՛ղ ինձ զյանցանս: Ժողովող ցրուեալս, ժողովեա և զիս, ժողովոյս անդրանկաց:

Ի քէն Տէր հայցեմք ի մարդասիրէդ ի ճշմարտութիւն: Ընդ կեանք մեռելոյս, լոյս խաւարելոյս, լուծանող ցաւոյս:

Խորհրդոց գիտող, խաւարին չարածու, խորհուրդ լուսաւոր: Ծնունդ Հօր ծոցոյ, ծածկելոյս ասացեր, ծագեա լոյս փառաց:

Կենարար փրկիչ, կեցո զմեռելոյս, կանգնեա զգլորեալս: Հասարակ հասա-

տալ, հաստատեա յուսով, հիմնեա սիրով:

Զայնիս աղաչեմ, ձեռօքս պարզա-
ռիմ, ձիր բարեաց շնորհեա: Ղամպա-
րամբ լուսոյ· գեղեցկավառ ճառագայ,
զարդեալս ամբոցս:

Ճառագայթ փառաց, ճանապարհ
ինձ ցոյց, ճեպել ի յերկինս: Միածին
հօր, մոյծ զիս յառագաստ, մաքուր
հարսանեացդ:

Յորժամ գաս փառօք, յահագին յա-
ւուրն, յիշեա զիս Քրիստոս: Նորոգօղ
բարեաց նորոգեա և զիս, նորոգ զար-
դարեա: Շնորհատու բարեաց. շնորհ-
եաց թողութիւն: Շնոր· զքաւութ·
Ո· բախոյցս Տէր, ող ւոյս փրկութեանդ,
ոյր վասն եմ խուզ: Զար մշակոյն,
չար սերմանց նորինչորոցս բղխեր-
ուղն: Պարգևիչ բարեաց, պարգևեա
իմոց, պարտեացս թողութիւն:

Ջուր շնորհեա աչացս, ջերմ հեղուլ
զարտասուր, ջնջել զյանցանս: Ունելին
քաղցու, սամ հոգւոյս տուր, սաճ



ցոյց ինձ լուսոյ:

Տէր անուն Յիսուս, սիրով քո ձմլ-
եա, սիրտ իմ քարեղէն: Վասն գթու-
թեան, վասն ողորմութեան, վերստին
կեցո:

Տենջալեօյդ տեսլեամբ, տուր ինձ
յագենալ, Տէր Յիսուս Քրիստոս:
Րաբունդ երկնաւոր, բաշխեա զաշակեր
տըս, բաժից երկնայնոց:

Ցօղ արեան քո Տէր, ցօղեա ի հոգիս
ցնծացեալ անձն իմ: Իւծեալս մեղօք,
իւծեալ աղաչեմ, ւիւսել ինձ բարիս:

Փրկիչ բոլորից, փութա զիս փրկել,
փորձութեանց մեղաց: Քաւիչ յանցա-
նաց, քաւեա զօրհնարանս, քեզ երգել
զփառս:

## ԱՇԽԱՐՀ ԱՄԵՆԱՅՆ

Աշխարհ ամենայն, առ ի նայեցեալ
ախտակից լերուք, բանամ զշրթունս
որսա իմ լեզուաւս, բողոքեմ զան-
իմ Տէրողորմեա, Տէր ողորմեա,
ր ողորմեա·

Գող եղէ մեղաց զաղ կորուսեալ, զուր՛ ինձ փարեցի, զառեցի զանձն իմ, զաւաճանեցի, զարան գործեցի, Տէր ողորմեա:

Երբեմն էի լոյս և այժմ խաւար եւ տաճար մաքուր զի արդ պատմեցից, զթիւ մեղաց իմոց, զի բազում են յոյժ. Տէր ողորմեա:

Երկինք և երկիր, եկայք ողբացէք եղկելի զանձն իմ: Ընտրեցի զչարն ընկալայ կամաւ, ըղձո յլրս մեղաց, Տէր ողորմեա:

Սիրով ցանկութեան, սաստիք բարկութեան, սիրտ իմ խոցեալ է վիրօք յանձանց, վշտանայ հոգիս վտարանեալ շրջիմ, Տէր ողորմեա:

Տիրեցին ինձ չարք, տարագիր հանին, տիրական գրկացն, բարունայն բարեւոյ, բախտական ձայնին բանիս ոչ լուայ, Տէր ողորմեա:

Ցանկութիւն չարեաց, ցանկալի զիմօք, ցաւեցոյց զաչս իմ, ի բաքան-



Ջիւրոց, ի խաւամամբ խաւան ախտից, ւիւծեալ է հոգիս Տէր ողորմեա:

Փութացիր անձն իմ փախչիլ ի չարեաց, փափաքիլ բարեաց, քեզ միշտ մերձ ճանիր, քուն մահու եկեալ քըննող դատաւոր, Տէր ողորմեա:

Աստուածածնին բարեխօսութեամբ յիշեա Տէր և ողորմեա:

---

Եղիցի անուն Տեառն օրհնեալ. ի յայսմ հետէ, մինչև յաւիտեան:

Օրհնեցէ՛ք մանկունք զՏէր. և օրհնեցէք զանուն Տեառն: Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմ հետէ մինչև ի յաւիտեան: Յարևելից մինչ ի մուտս արևու օրհնեալ է անուն Տեառն ի յայսմ հետէ մինչև ի յաւիտեան:

Փառք և երկրպագութիւն Հօր եւ Որդւոյ եւ սուրբ Հոգւոյն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն ի յայսմ հետէ մինչև ի յաւիտեան:

Արի՛ Տէր օգնեա՛ մեզ, եւ փրկեա՛ զմեզ վասն անուան քո:

Սրբ՛ և մի՛ մերժեր զմեզ · իսպառ վասն անուան քո :

Թագաւորեսցէ Տէր յաւիտեան՝ Աստուած քո Սիոն, յազգէ յազգ : Օրհնեա՛ անձն իմ զՏէր, օրհնեցից զՏէր ի կենդանութեան իմոյ :

Սար Օրթի : եւայլն :

Փա՛ռք յարութեան քո Տէր, ո՛չ դադարեսցայց Քրիստոս օրհնել զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ :

Եւ ոչ դադարեսցայց Փրկիչ, Փառաւորել զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ :

Ի գիշերի համբարձէք · զձեռս ձեր ի սրբութիւն, և օրհնեցէք զՏէր :

Աստ օրհնեցէք ամենայն ծառայք Տեառն, զՏէր ի սրբութիւն, և օրհնեցէք զՏէր :

Լուսապայծառ հրեշտակք նստելով ի կենդանատու գերեզմանին · և աւետէր կանանցն յարեաւ Աստուած :



Փառք ի Բարձունս Աստուծոյ · և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն : Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս · օրհնեալ ես Տէր Աստուած մեր · օրհնեմք զքեզ եւ գովեմք զքեզ : Խոստովանիմք Տէր զքեզ եւ երկրպագանեմք քեզ · փառաւորեմք ըզքեզ · գոհանամք Տէր, զքէն վասն մեծի փառաց քոց : Տէր թագաւոր սուրբ երկնային · Աստուած եւ հայր ամենակալ : Տէր եւ որդի հօր միածին Յիսուս Քրիստոս եւ սուրբ որդի : Տէր Աստուած գառն Աստուծոյ եւ որդի հօր · որ առեր զ մ ե ր ձ ի կուսէն : Ողորմեցար բարձեր զմեղս աշխարհի և արդ ընկալ զաղաչանս մեր : Սա բրդ որ նստիս ընդ աջմէ հօր, ողորմեաց մեզ : Զի դու միայն սուրբ. դու միայն բարձրեալդ ես, դու միայն Տէր մեր Յիսուս Քրիստոս : Տէր և հոգիդ սուրբ որ ի փառս Աստուած ընդ հօր · Ամէն :

Եւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ · Տէր և գովեմք զանուն սուրբ քո, յա-

վիտեան եւ յաւիտեանս յաւիտենից:
Արժանի արա Տէր. զօրս զայս խաղա-
ղութեամբ. և առանց մեղաց պահել
զմեզ: Օրհնեալ ես Տէր Աստուած
հարցն մերոց. գովեալ և փառաւոր-
եալ է անուն սուրբ քո յաւիտեանս.
Ամէն: Օրհնեալ Տէր ուսո՛ ինձ զար-
դարութիւնս քո -երիցս կրկնել-: Տէր
ապաւէնս եղեր մեր յազգէ յազգ: Ես
ասացի, Տէր ողորմեա՛ ինձ և բժշկեա
զանձն իմ. ես մեղայ քեզ: Ցո՛յց մեզ
Տէր զողորմութիւնս քո. և զփրկու-
թիւնս քո տո՛ւր մեզ: Տէր ողորմու-
թիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց
քոց մի անտես առներ: Տէր իմ զքեզ
ապաւէն ինձ արարի. ուսո՛ ինձ առնել
զկամս քո, զի դու ես Աստուած իմ:
Ի քէն է Տէր աղբիւր կենդանութեան.
և լուսով երեսաց քոց տեսանեմք ըզ-
լոյս: Ծագեա՛ զողորմութիւնս քո՝
որք ճանաչեն զքեզ Տէր:

Զյարութիւն զփրկչին օրհնեսցուք.



զփրկչին մերոյ օրհնեն սուրբ զյար-
ութիւն:

Յարեաւ Աստուած, եւ ցրուեցան ա-
մենայն թշնամիք նորա:

Խաչի. Ետուր երկիւղածաց քոց նը-
շան, զի ապրեսցին յերեսաց աղեղան:

Որպէս փրկեսցին սիրելիք քո. կեցո
աջով քով եւ լուր մեզ:

---

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր,
սուրբ եւ անմահ որ․․․ փառն մեր, ո-
ղորմեա՛ մեզ: -երիցս կրկնել-

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ
կոյս զԱստուածածին, Մարիամ մայր
Քրիստոսի, մատո զաղաչանս մեր որ-
դւոյ քո և Աստուծոյ մերոյ:

Եղիցի՛ անուն Տեառն օրհնեալ, յայ-
սմհետէ մինչեւ յաւիտեան:

Օրհնեցէ՛ք մանկունք զՏէր, և օրհ-
նեցէք զանունն Տեառն:

Եղիցի՛ անուն Տեառն օրհնեալ, յայ-
սմհետէ մինչեւ յաւիտեան:

Յարեւելից մինչեւ ի մուտս արեւու՝

օրհնեալ է անուն տեառն :

Նստուցանէ զնոսա իշխանս՝ ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ :

Բնակեցուցանէ զամուլն ի տան ուրախամիտ․ որպէս մայր որդւովք ըեր կրեալ :

Նորատեսծեալ բանն յանէից ի բակբանէ գերկինս երկնից․ և գերկնային զօրս անմարմնոց իմանալեացն զուարթնոց. և զգալի տարերց քառից հակառակաց միաբանից․ որով յաւէտ փառաբանի Երրորդութիւն անճառելի:

Երեքսրբեան մի էութիւն միով ընութեամբ աստուածութիւն․ լոյսն որ անեղ արարչական ասաց լինել լոյս եղական. զոր եւ ծագեաց յառաջին միաշաբաթ կիւրակէին, որով յաւէտ փառաբանի եր :

Բարունորէն բացատրեացուք զծածկեալ խորհուրդն ծանիցուք․ զի լոյս անտես իմանալի մաքուր հոգւոյ տեսանելի. ի սոյն ծագեայ միաշաբաթ



մնզ յարութեան սուրբ ճառագայթ․ եկայք փրկեալք ընդ զուարթնոյն տուք օրհնութիւն յարուցելոյն :

Սէրդ սիրով խոնարհեցար ի փրկութիւն մեր մարմնացար․ նովին մարմնով խաչեցար ի գերեզման մահու եդար․ այսօր յարեար աստուածապար ի հրեշտակաց քարոզեցար. եկայք :

Էրեւեցար խնկաբերիցն յաղջայն կենաց ուրախալից. և ի լերինն Գալիլիա առաքելոց մետասանից․ արժանացո ըզմեզ ընդ նոսին զքեզ տեսանել յօրն վերջին․ եկայք փրկ :

Սիօնի որդիք զարդիք հարսին լուսոյ տուք աւետիք․ եթէ փեսայն քո յարուցեալ յաղթեալ մահու իշխանութեամբ․ սա պսակէ զքեզ փառօք եւ ընդ առաջ պճնեալ զարդիւք․ երգեա երգ նոր յարուցելոյն ննջեցելոց կենաց պտղոյն :

## ԿԱՆՈՆ ԽԱՉԱՀԱՆԳՍՏԻ

Զօրութիւն սուրբ խաչի քո Քրիստոս, որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի. սա պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ:

Քանզի ի սմա բարձրացար Աստուած և ի նմա հեղեր զպատուական սուրբ զարիւնդ սա պահեսցէ զմեզ:

Եւ զքո միւսանգամ զգալուստ նշանաւ խաչի քո ցուցեր աշխարհի. Սա պահեսցէ:

Որ եկիր ի փրկութիւն մարդկան ծննդեամբ կուսին Մարիամու. և կենդանարար քո յարութեամբդ, հրաւիրեցեր զմահացեալքս ի յարութիւն անմահութեան, վասն որոյ աղաչանօք մօր քո կեցո զմեզ Փրկիչ:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:

Առ քեզ ապաւինիմք, ամենասրբուհի· գերագոյն և հրաշալի և բաշխող



բարութեանց, աղբիւր ես ծարաւեաց և հանգիստ աշխատելոց, եւ եղեր մերընկալ աստուածային բանին:

Դպ. Ամէն ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա: 3 անգամ.

Քահ. Օրհնեսցի և սրբեսցի ջուրս այս նշա: Նոյն 3 անգամ.

Դպ. Ամէն:

Քահ. Օրհնութիւն և փառք.

Տաճար են սուրբ հոգւոյն, կենդանի աղբերք սոցա հիւանդաց բժիշկ, աղաչեսցուք զսէր, խնայեա ի մեզ:

Սոքա են դեղ կենաց. պարգեւեալ մեզ ի Քրիստոսէ ի բժշկութիւն, պատուական սուրբ արեամբն իւրեանց:

Սա է կարապետ յաւուր գալստեան Փրկչին, և պսակ պարծանաց հաւատացելոց:

Սար. Վասն հիւանդաց: Նոյն:

## ԵՐԳ ԿԻՐԱԿՆԱՄՏԻ

Ալէլուիա, Ալէլուիա.
Լոյս զուարթ սուրբ փառաց անմա-

նի, Հօր երկնաւորի որդւոյ կենարարի Յիսուսի Քրիստոսի: Եկեալքս ի մտանել արեգականն, տեսաք զլոյս երեկոյին: Օրհնեմք ըզՀայր և զՈրդի և ըզսուրբ Հոգին Աստուծոյ: Եւ ամենեքեան ասեմք․ ամէն: Արժանաւորես զմեզ յամենայն ժամ, օրհնել ձայնիւ երգով զանուն փառաց ամենասուրբ Երրորդութեանդ: Որ տաս զկենդանութիւն վասն որոյ և աշխարհս ըզքեզ փառաւորէ:

## ՇԱՐԱԿԱՆ ԿԻՐԱԿՆԱՄՏԻ

Ա՛․ Սուրբ ես Տէր զօրութեանց, որ բնակեալդ ես ի յերկինս, և բարերանիս ի սրբոց քոց: Երկնային զօրութիւնք սերովբէք և քերովբէք անդադար օրհնեն սուրբ զանունդ քո: Քահանայք ընդ նոսին պաշտօնեայք և ժողովուրդք, երկրպագեսցուք տէրութեանդ քո: Լոյսդ որ յառաջ քան յաւիտեանս ի Հօրէ առաքեցար, և լուսով իմանալեաւ լցեր զարարածս․



օրհնեալ ես թագաւոր յաւիտենից: Որ զլոյսն ի սկզբանէ հաստատեցեր վերային և զխաւարն անգիտութեան քարոզութեամբ քո հալածեցեր, Օրհնեալ: Ուստի և մեք լուսաւորեալքս ընդ լուսեղէն զուարթնոցն, երգեսցուք ցնծութեամբ ի յարութեան երեկոյին, օրհնեալ ես թագաւոր յաւիտենից: Երկնաքաղաքացին Յովհաննէս մեծ ի ծնունդս կանանց քարոզէր յանապատի ազգարարող բարբառովն ըզծագումն լուսոյ արեգականն արդարութեան: Ճշմարիտ մարգարէ և ձեռնադրող Որդւոյն Աստուծոյ, յառաջնորդաց Կարապետ և պատմող աստուածային օրինացն, հարթէր ճանապարհս թագաւորին յաւիտենից:

Յանօրէն գինարբուսն մոլեգնեալ Հերովդիադայ, ի պարգեւի մասին խնդրէր զգլուխ մարգարէին չիջուցանել զարուսեակն և զանաղօտ լոյսերին:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ :

Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբ պարգեւեա երկրպագուացս ամենասուրբ Երրորդութեանդ, զյարութիւն յուսոյ կենացդ յաւիտենից :

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս :

Զհաստատեալ ժողովուրդս սուրբ Երրորդութեանդ, եւ զապաւինեալս ի խորան փառաց քոց, պահեա անխռով ի խաղաղութեան :

## ՊԱՇՏՕՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ ՇԱՐԱԿԱՆ

Դկ. Որ յանէից ստեղծող գոյից արարչական Հօր բանդ Աստուած, թագաւորութիւն շնորհեա ննջեցելոց քոց ծառայից, յորժամ գաս դատել զոր անարատ ձեռօք ստեղծեր : Որ ի Հօրէ առաքեցար եւ մարմնացար ի սուրբ կուսէն. թագաւորութիւն շնոր : Որ ի խաչին անշնչացար զմահու լուծեր զիշխանութիւն. թագու : Որ պսակիչդ ես քոց սրբոց, եւ անվախճան բարեաց բաշխող. թագաւորութիւն շնորհեա :



Գ.Հ. Անսկիզբն Աստուած սկիզբն արարչութեան, ի հողոյ ստեղծեր ըզ մարդն առաջին, գործել եւ պահել յանպատում ի կեանս, խակ ի զանցանել հրամանի քո Տէր, զվճիռ մահու ի վերայ եդեալ, հող էիր անդրէն եւ ի հող դարձցիս, եւ այժմ աղաչեմք բաստեղծողդ ամենից, ընկալ եւ հանգո զհրաժարեալ հոգիս յաւիտենականն լուսեղէն խորանս, ուր ժողովքն են սրբոցն ի խաղաղութեան, հողւով հեղութեամբ յերկնից բարութենն :

Կոչողն եհաս վերին կոչողին, կոչնատէրն ահեղ կոչողն ահաւոր, զատաւորն անաչառ զատաւորն արդար, հրեշտակք անողորմք գանեն զմեղաւորս. եւ այժմ աղաչեմ :

Փառաց ի փառս բարձրանան, աջակողմեանքն վերանան, յորժամ լսեն զերանական ձայն օրհնութեան ի քէն կոչման, ննջեցելոյս մեր լսելի ցԱստուածային բարբառդ. զատաւորեա

ըզսա վերնոյն երգել ըզփառս ընդ զուարթնոցն ։

Բաժանայք և ժողովուրդք հայցեմք ի քէն, Տէր բարեգութ, ընդ ննջեցեալսն հաւատով, ընկալ ըզմեզ նովին յուսով ։ յԵրուսաղէմ քաղաք վերին յարում արդարքն ժողովին, փառս վերերգել միշտ ընդ նորին երրորդութեանդ երրեակ անձին ։

Ի վերին Երուսաղէմ ի բնակարանս հրեշտակաց, ուր Ենովք և Եղիաս կան ծերացեալ աղաւնակերպ, ի դրախտին եդեմական պայծառացեալ արժանապէս, ողորմած Տէր ողորմեա հոգւոցն մեր ննջեցելոց ։

Ահեղ խորհուրդ քահանային, բազկատարած կայ ի բեմին, առաջի սուրբ սեղանոյն, հուր չիջանի խաւար մերժի, տրտմեալ հոգիքն ուրախանան, զի թողութիւն մեղաց լինի, ողորմած Տէր ։



## ՇԱՐԱԿԱՆ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱՑԻ ԺԱՄԱՆԱԿ

Սուրբ Աստուած Հայր անսկիզբն, Աշխարհի ողորմեա՛ մարդասէր․ Ած հա՛րցն մերո՛ց ։

Սուրբ Աստուած Որդիդ միածին, մեղաւորաց գթողութիւն շնորհեա՛ մարդասէր Աստուած հա՛րցն մերո՛ց․

Սուրբ Աստուած Հոգիդ ճշմարիտ իշխանեալ բարկութենէ ամրոցա՛ս մարդասէր․ Աստուած հարց՛ն մերո՛ց ։

Ընդ անառակին որդւոյ գ՛ոչեմք առ հայրդ գթած․ մեղաք յերկինս և առաջի քո քաւիչ յանցանաց, ե՛լ ընդ առաջ սիրո՛վ իրկեա համբուրիւ․ մաքրեա զ՛մեզ ի մեղաց մերո՛ց ։

---

Դձ․ Հրաշափառ Աստուած և միշտ բարեխնամող որ յառաջգիտութեամբ ըզփրկութիւն Հայաստանեայց սկզբնաւորեալ, ի պարթևական մեղապարին

ազգէն լուսաւորիչ մեզ շնորհեցեր, վասն որոյ բարեխօսութեամբ սորա փրկիչ կեցո ըզմեզ այժմ և ի քո յահաւոր քո գալստեանդ :

Դ․ձ․ Որ զշնորհս Աստուածային առ ի վերուստ եջեալ յերկնից պարգեւեցէր հիւսիւսականաց ի ձեռն սուրբ վարդապետաց․ Աղաչանօք սորա, ողորմեա մեզ Աստուած :



ՎԵՐՋ



ՑԱՆԿ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆՑ
Ս․ ՊԱՏԱՐԱԳ

| | էջ |
|---|---|
| Խորհուրդ Խորին | 1 |
| Յարեաւ Քրիստոս | 4 |
| Ի Գերեզման | 5 |
| Փառաբանակից | 5 |
| Բարեխօսութեամբ | 6 |
| Միածին Որդի | 7 |
| Գովեա Երուսաղէմ | 8 |
| Հաւատամք ի մի Ած․ | 10 |
| Հրեշտակային | 14 |
| Առաքելոյ | 19 |
| Գոհութիւն | 21 |
| Մաղթանք Տէր Ողորմեայի | 26 |

Տես շարունակութիւն 56րդ էջ



ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե.
Կաթողիկոս Ամենայն Հայոց





ԳԵՐ. Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿ.
Առաջ. Հայոց Ամերիկայի

## ․ ԿԻՐԱԿԻ ԱՌԱՒՕՏՈՒՆ

| | |
|---|---|
| *Յիշեսցուք ի Գիշերի* | 31 |
| *Զարթիք փառք իմ* | 31 |
| *Առաւօտ Լուսոյ* | 32 |
| *Աշխարհ Ամենայն* | 35 |
| *Եղիցի Անուն Տեառն* | 37 |
| *Փառք Յարութիւն* | 38 |
| *Փառք ի Բարձունս* | 39 |
| *Սուրբ Աստուած Եղիցի* | 41 |
| *Նորաստեղծեալ* | 42 |
| *Կանոն Խաչահանգստի* | 44 |
| *Ժամք․ Կիրակնամտի շր․* | 45 |
| *Պաշտօն Ննջեցելոց* | 48 |
| *Սուրբ Ած․ Հայր Անսկիզբն* | 51 |
| *Հրաշափառ Ած․* | 51 |

ՀՀ Ազգային գրադարան
NL0158719

Տիթրոյթի Հոգաբարձութեան

Հասցէն հետեւեալն է՝

# Board of Trustees of the Armenian Apostolic Church

33 E. Montcalm St.

Detroit, Mich.

Տպագրութիւն

Ս. ՅԱԿՈԲԵԱՆԻ

150 W. Larned St. - 210 Larned Bldg.

Detroit, Michigan